

«ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԾԱՂԿԱԶՈՐՈՒՄ (մարտի 2-5, 2000 թ.)

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի նախաձեռնությամբ 2000 թ. մարտի 2-5-ը գեղող ունեցավ «Հայոց Եկեղեցի և պետություն» միջազգային գիրաժողովը: Գիրաժողովին հրավիրված էին հոգևորականներ, աստվածաբաններ, գիրքնականներ Հայաստանի Հանրապետությունից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Օւկրաինայից, Վրաստանից, Ֆրանսիայից, Անգլիայից, ԱՄՆ-ից և Դանիայից:

Մարտի 2-ին Մայր Աթոռում, Ս. Վարդանանց ոգեկոչման օրը, Ս. Պատրարքական պարտիք հետո, Վեհարանում, Գերշն. Տ. Շահեն արքեպոս. Աճեմյանի և Մեսրոպ արքեպոս. Աշճյանի նախազահությամբ, բացվեց գիրաժողովը:

Այսուհետև գիրաժողովի մասնակիցները մեկնեցին Օշական: Մասնակիցների անունից Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին ծաղկեապսակ դնելուց հետո նիստը շարունակեց իր աշխարհանքը Դպրաբանը: Զեկուցումներով հանդես եկան ԼՂՀ-ի ներկայացուցիչները, որոնք ներկայացրեցին պետություն-Եկեղեցի փոխհարաբերությունների պատկերը ԼՂՀ-ում, կրոն-մշակույթ-դպրոց հարաբերությունների դրվագը այսօրվա անկախ հանրապետությունում:

Մարտի 3-ին Ծաղկաձորի Գրողների միության հանգստյան փան նիստերի դահլիճում գիրաժողովը շարունակեց իր աշխարհանքը:

Առավույյան նիսպին ամբողջությամբ նվիրված էր Եկեղեցի-պետություն փոխհարաբերություններում հոգևոր դարրի վերադարձին, առանց որի պետականության գոյությունը ապագայում վրանգի փակ է դրվում:

Զեկուցումներով հանդես եկան՝

Ս. Կամսարական - «Հայոց պետականությունը՝ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխլրացումային ամրողացություն».

Ս. Սփեփանյանց - «Եկեղեցին ակտությունից անջարելու հերթականությունը Եվրոպայում ու Խորհրդային Հայաստանում».

Ս. Նարությունյան - «Պետության և Եկեղեցու համագործակցությունը երկրի պաշտպանության գործում».

Ս. Մայիլյան - «Ժամանակի աղանդներն ու հայոց պետականությունը».

Ո. Մաթևոսյան - «Պետություն-Եկեղեցի կապի արդացումը գինանշաններում IV-XIII դդ.»:

Կ. Միքումյանի, Հր. Ավետիսյանի, Ա. Տարությունյանի, Ա. Մուշեղյանի գեկուցումները նվիրված էին Հայ Առաքելական Եկեղեցու և հայոց արքունիքի հարաբերությունների հարցին, Եկեղեցու անկախացման գործնադաշտում արքունիքի դերին, նույն խնդրին վերաբերող հարցերի արդացումանը հայ մարդենազրության մեջ՝ միշտարից սկսած մինչև մեր օրերը, ինչպես նաև նորագույն պարմության շրջանում Հայ Եկեղեցու դիրքորոշմանը ազգային հարցերի հանդեպ:

Տ. Սահակյանի գեկուցումը նվիրված էր 1918-1920 թթ. Եկեղեցի-պետքություն հարաբերությունները կարգավորող ժամանակավոր դաշնագրին:

Դայր Ֆիլիպը գեկուցեց Անգլիայի նկեղեցական փորձի մասին, իսկ Միքայել ծ. Վորդ Աջապահյանը՝ Եպահյայի և Կարիկանի փոխհարաբերությունների մասին:

Էդ. Բաղդասարյանի գեկուցման մեջ առանձնացվեց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների համագործակցությունը, իսկ Գ. Տեր-Վարդանյանն անդրադարձավ XIV դ.՝ առաջին կեսին կիմիկյան շրջանում Աննայն Հայոց Կաթողիկոսության և Ամիկյոնի Պատերի փոխհարաբերությունների հարցերին:

Մարդի 4-ին Էդ. Դանիելյանի գեկուցումը նվիրված էր հայ նախարարական համակարգի և Հայ Առաքելական Եկեղեցու ազգապահպան նշանակությանը վաղ միջնադարում:

Եկեղեցի-պետքություն հարաբերության մասին գեկուցեցին Պ. Չորանյանը («Եկեղեցին և պետքությունը ազգային ճակարտում»), Ա. Այվազյանը («Քջնու, Հաղբարի, Ա. Թաղենու և Ա. Տաթևի արքանի կողապանների հավանություն փառու կանոն»), Է. Կոստանդյանը, («Պետքության և Եկեղեցու փոխհարաբերության մի քանի հարցեր»), Վ. Թումանյանը («Հայկական Եկեղեցու «Պոլուծենիա»-ն և նրա կիրառումը 1836-1874 թթ.»), Ա. Տարությունյանը («Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը. 1918-20 թթ. ներպետական դիվանագիտական գործունեությունը»):

Ուշագրավ էր Ռուս Ռուզափառ Եկեղեցուց Կիրիլ Միքրոպոլիտի «Հավատի արմենները՝ կյանքի չափանիշ» բանախոսությունը, որը ներկայացրեցին միդրոպալիստ ներկայացուցիչ Նիկոլայ արդ. Բալաշովը և Ի. Վելիխանովը: Բանախոսության մեջ ընդգծված էին այն հիմնական սկզբունքները, որոնք կարգավորում են Ռուս Ռուզափառ Եկեղեցու և պետքության փոխհարաբերությունները: Զնյաց Եկեղեցին անջարված է պետքությունից, բայց այն անջարված չէ ժողովրդից, ուստի ներկա ժամանակաշրջանում Եկեղեցին պարփակոր է արձագանքել հասարակությանը հուզող բոլոր հարցերին՝ կյանքի չափանիշ ունենալով հավատի արժեքները:

Կ. Արմենյանն (ԱՄՆ) ասաց, որ այսօր սիյուռքում միակ քաղաքական օրենսգիրը Ազգային Սահմանադրությունն է, որը կարգավորում է Եկեղեցի-պետքություն հարաբերությունները սիյուռքում:

Ֆրանսիացի հայագետ Ժ. - Պ. Մահեի բանախոսությունը ներկայացրեց Գ. Գևոնյանը: Այն նվիրված էր Հայաստանում V-XIII դդ. քաղաքացիական օրենսգրերին և նկեղեցական իրավունքին:

Ֆրանսիայում Եկեղեցին պետությունից բաժանելու պարմությանն էր նվիրված գ. Գևոնյանի բանախոսությունը: Այսօր Ֆրանսիայի կրոնական համայնապատկերում երկրորդ տեղն է գրավում մահմենյական փարքը (4 մլն., համեմապության համար նշենք, որ բողոքականների թիվը 1 մլն. է), որը լուրջ խնդիրների առաջ է կանգնեցնելու Ֆրանսիայի պետականությանը:

Դանիայում Եկեղեցի-պետություն հարաբերությունները կարգավորվում են 1849 թ. ընդունված կանոնադրության համապատասխան հոդվածներով, իրենց դրական և բացասական հետևանքներով (Մ. Վեստ, Եկեղեցին և պետությունը 1849 թ. Սահմանադրության մեջ):

Խորայելում կրոնական խնդիրները ներկայացրեց Շահե արքեպս. Աճեմյանը, որը հանդես եկավ «Խորայելի հակամախիններական օրենքը» բանախոսությամբ:

Թ. Սամվելյանը ներկայացրեց ԱՄՆ-ում Եկեղեցու ներգործության դերը հասարակության վրա: Որքան էլ փարօրինակ հնչի, մի երկրում, որ պետությունն ու Եկեղեցին ամբողջովին փարանջապված են, կյանքի համարյա բոլոր ոլորդները, ներառյալ քաղաքական, տնտեսական, բարոյական, գյուղում են կրոնի ազդեցության վրակ:

Նաթան Եպս. Հովհաննիսյանը ներկայացրեց Եկեղեցի-պետություն հարաբերությունները ներկա ԱՊՀ երկրներում նշելով այն բարձր դիրքն ու նշանակությունը, որ ունի Եկեղեցին այդ երկրներում:

Մարտի 5-ի առավողյան նիստում ամփոփեցին գիտաժողովի աշխատանքները, որից հետո ընթերցվեց մի հայդարարություն: Դրանով գիտաժողովն ավարտեց իր աշխատանքները:

Գրականություն. «Հայոց Եկեղեցի և պետություն», 2-5 մարտի 2000 թ., միջազգային գիտաժողովի նյութերը. Էջմիածին-Օշական-Ծաղկաձոր, Երևան, 2000:

Ս. ՄԱՅԻԼՅԱՆ